ԺԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 4322 — 21/25 ՄԱՅԻՍ 1900 — ՈՒՐԲԱԹ — 26 ՄՈՒՀԱՄՐԷՄ 1318 — ԺԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 4322

درسعادت اداره‌خانه‌سی غزته‌جی (آره‌وك) ده‌طلب اولنور

ՊՈԼԻՍ, Ղալաթիա, Նորաւուրկեան Խան

Les Annonces sont reçues à la Direction du Journal "AREVELK„ Galata, CONSTANTINOPLE.

Նամակ կամ որեւէ գրութիւն պէտք է ուղղել ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

20 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԴՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ գաւառներու համար տարեկան. 140 Ղրշ.
» » » » վեցամսեայ. 70 »
» » » » եռամսեայ. 40 »
Օտար երկիրներու համար տարեկան. 40 Ֆրանկ
» » » վեցամսեայ. 20 »
Դրամի փոխարէն փոստի փոյլ կ'ընդունուի, 115 դրուշի փոյլը 100 դրուշի հաշուով:
Ձեղակալ թղթատարի ծախքը բաժանորդներուն կը վերաբերի:
Մանուցմանց համար պէտք է դիմել ուղղակի խմբագրատուն:

20 ՓԱՐԱ

ՊԱՐՍԿԱՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Այս օրերս Պարսկաստանէն ստացանք կրթական Մրագիր մը որ շատ յստակօրէն կը պատկերացնէ Պարսկահայոց մէջ վերջերս առաջ եկած գովելի շարժում մը՝ դէպ ի կրթական գործին բարելաւումը։ Ց յանի կ'ըլլայ որ տեղւոյն Հայերը լրջօրէն ձեռք առած են իրենց դպրոցներու կանոնաւորման խնդիրը, հաւաքական ձեռնարկի մը միջէ տեղւոյն հայ հասարակութեան ամէնէն զարգացած անդամները այդ խնդրին շուրջը խմբելով։ Ասկէ զատ կրցած են նաեւ գտնել շատ զօրաւոր աջակիցներ՝ կովկասի երկու գլխաւոր կեդրոններէն, Թիֆլիսէն ու Բաքուէն. աջակիցներ՝ որոնց մէջ կարելի է գտնել բարձրաստիճան եկեղեցականներ, գրագէտներ, կրթական ընկերակցութիւններ, դիրքի տէր վաճառականներ, բժիշկներ ու մեծահարուստ անձեր։

Այս ձեռնարկը աւելորդ է ըսել թէ շատ գովելի է, և վարժարաններու կանոնաւորման գործին համար ցուցուած այդ ձգտումն ալ վերջին ատիճան պատուաբեր կրնայ ըլլալ ո՛ և է հասարակութեան մը։ Պարսկահայոց համար մանաւանդ շա՛տ աւելի գովելու պէտք է չտայուի, նկատի առնելով սա պարզան թէ ասկէ առաջ կրթական գործը անոնց մէջ շա՛տ երկրորդական աստիճանի մը վրայ կը գտնուէր և թէ տեղական ու հովկասեան մամուլին մէջէն քննադատութիւններ միշտ անպակաս կ'ելլային այն անտարբերութեան դէմ՝ որով պարսկահայ հասարակութիւնը կը վերաբերուեր իր վարժարաններուն։ Կ'երեւայ թէ այդ քննադատութիւնները փրկարար դեր մը խաղացեր են, քանի որ Կրթական Մրագիրը զոր ընդունած ենք. իր մանրամասնութեանց մէջ զգացնել կու տայ թէ շատ լուրջ ջանք մըն է այս անգամուան սկզբուածը և թէ մօտաւոր ապագայի մը մէջ Պարսկահայոց դպրոցները եթէ ո՛չ առաջնակարգ, գէթ բաւական զգալի բարելաւում մը պիտի կրեն։ Արդէն իսկ կազմուեր է կրթական յատուկ Ցանձնաժողով մը, Պարսկաստանի Սատրապամին հսկողութեան տակ, և Վ.Հ. Շահն ալ բարեհաճութիւնը ունեցեր է իր հովանաւորութեան տակ առնելու այդ կրթական բարեշրջման գործը, ոլոր տուած արդիւնքները թերեւս մօտ ատենէն առիթը ունենանք արձանագրելու։

Մտրեւ կը հրատարակենք, հետաքրքրական ու թերեւս մերիններուն համար ալ օրինակելի այդ կրթական ծրագիրը, որ բաց ի իր վաւերագրի հաղամանքէն, կրնայ առանձին օգտակարութիւն մը ունենալ գաւառային առաջնորդներու՝ որոնք շատ հեղ չուարած կը մնան թէ ինչպէ՛ս կազմակերպեն իրենց թեմին կրթական գործը։

* * *

Ա.—Ներկայ Մուզաֆֆէր-Էդդին Շահը մեծ ձգտումն և ցանկութիւն է տալիս զօրեղ զարկ տալ կրթութեան գործի զարգացման Պարսկաստանի մէջ։ Նրա օրով և նրա հրամանով բացուեցին Թէհրանում մի շարք դպրոցներ, նախակրթարաններ, իսկ այս օրերս բացուեց նաև մի բարձր դպրոց քաղաքական գիտութիւններ և իրաւագիտութիւն ուսուցանելու համար։

Բ.—Պարսկաստանի հայ ազգաբնակութիւնը, որ երկրի բոլոր մէջ ժողովրդներից առաջ զգացել է կրթութեան անհրաժեշտութիւնը և զանազան քաղաքներում, Թէհրանում, Թաւրիզում, Նոր-Ջուղայում, Ռաշտում, Արտաբիլում, Ղազվինում, Սալմաստում մի քանի դպրոցներ է բացել, պէտք է օգուտ քաղի ուսումնասէր Շահի այդ տրամադրութիւնից և կրթական գործին աւելի մեծ ծաւալ, կանոնաւոր թիւն, և որ գլխաւորն է, մի ընդհանուր ուղղութիւն տայ, միացնելով բոլոր դպրոցները մի ընդհանուր կրթական վարչութեան հսկողութեան ներքոյ, թէ ըստ ուսումնականին և թէ ըստ անտեսականին, առանց ի հարկէ, միջամտելու տեղական ներքին կազմակերպութեան մէջ, մշակելով բոլոր դպրոցների համար ուսման ընդհանուր ծրագիր և կանոնագրութիւն, բանալով բարձր կամ կենդրոնական, միջնակարգ և ստորին-ժողովրդական ծիսական ուսումնարաններ։

Գ.—Այս նպատակը հետզհետէ իրագործելու համար հիմնւում է Պարսկաստանի մայրաքաղաքում, Թէհրանում, երբեւ ամենից շատ յարմարութիւն ներկայացնող կենդրոնում, մի կենդրոնական յանձնաժողով, որին աջակից անդամներ կը լինեն նաև օտարերկրեայ քաղաքներում ապրող պարսկաստանցի Հայեր և կրթական գործին համակրող անձինք։

Դ.—Այդ յանձնաժողովը, որ պէտք է կոչուի «Պարսկաստանի կրթական Կենդրոնական Ցանձնաժողով», երբեւ գլխաւոր վարիչ և ղեկավար հայ ժողովրդի կրթական գործի, գտնվելու է Նորին Վեհափառութեան հովանաւորութեան և Սատրապամի խնամակալութեան ներքոյ։

Ե.—Միւս քաղաքներում և տեղերում գտնվող դպրոցների հոգաբարձութիւնները կամ վարչութիւնները, անկախօրէն գոյութիւն ունենալով հանդերձ, համաձայնում են կենդրոնական յանձնաժողովի մասեր և համաձայնում ու պատասխանատու են լինելու նրա առաջ երբեւ կրթական գործի ընդհանուր ղեկը և վարչութիւնը իր ձեռքում կենդրոնացնող մարմնի առաջ։

Զ.—Կենդրոնական Ցանձնաժողովը մշակելու է մի ընդհանուր ծրագիր, թէ ըստ ուսումնականին, թէ ըստ տնտեսականին, բոլոր, այն է կենդրոնական, միջնակարգ և ստորին-ժողովրդական ուսումնարանների համար, և ապա, բանակցելով Պարսկաստանում արդէն գոյութիւն ունեցող դպրոցների վարչութիւնների հետ, այդ ծրագիրը ընդհանուր պարտադիր անելու մասին ձեռնարկելու է։

1. Արդէն գոյութիւն ունեցող դպրոցների վերակազման նոր ծրագրի համաձայն։

Զ. Նոր դպրոցների բացման։

Է.—Կենդրոնական Ցանձնաժողովը հայթայթելու է վերակազմող և նոր բացւող դպրոցներին նիւթական միջոցներ ոչ թէ ամբողջովին, այլ ունեցած տեղական միջոցների պակասորդը, այսինքն աւելացնելու է այս կամ այն դպրոցի ունեցած գումարի վրայ այն, ինչ որ պակասելու է դպրոցը նոր ծրագրի համաձայն վերակազմելու համար. իսկ այն դպրոցների ծախքը, որոնք հնարաւորութիւն չունեն իրանք միջոցներ հայթայթել, հոգալու է կենդրոնական Ցանձնաժողովը։ Մինչ. Որ եւ է դպրոցի ունեցած աւելորդ միջոցները չեն պահանջուի նրանից մի այլ տեղ գործադրելու համար, եթէ ինքն դպրոցի վարչութիւնը ինքնայօժար չառաջարկի։

Ը.—Բոլոր դպրոցների գոյքը թէ դրամական և թէ այլ, գտնվելով հանդերձ տեղական հոգաբարձութիւնների ձեռքում, համարվելու է մասն ընդհանուր դպրոցական դրամագլխի կամ գոյքի, որն կոչվելու է Ընդհանուր կրթական Ցանձնաժողովի Պարսկահայոց և ընդհանուր համարակալութիւնը կամ հաշուեպահութիւնը գտնվելու է կենդրոնական Ցանձնաժողովի ձեռքում, ոն արթուն հսկողութիւն է ունենալու, իբրեւ կօնտրոլ ամէն մարմին, նաեւ զանազան քաղաքների դրամագլուխների ապահով և անթերի պահպանութեան վրայ, ինչպէս և հսկելու է ոլ այդ դրամագլուխները ծառայեն իրանց նպատակին։

Թ.—Կենդրոնական յանձնաժողովը բաղկացած է լինելու եօթն անդամներից որոնք պէտք է ներկայացնեն Պարսկաստանի հայ ժողովուրդը, այն է մի ներկայացուցիչ՝ ընտրված Թէհրանի հասարակութեան կողմից, երեք ներկայացուցիչ՝ Նոր Ջուղայի թեմից, բաց առեալ Հիդկաստանը, երեք ներկայացուցիչ՝ Ատրպատականի թեմից։

Այդ եօթն ներկայացուցիչների ընտրութիւնը կատարվելու է թեմական առաջնորդների հսկողութեան ներքոյ և ընտրութեան մասնակցելու են բոլոր Հայերը, առանց կրօնի խտրութեան։

Ժ.—Կենդրոնական յանձնաժողովի առաջիկայ գլխաւոր գործը լինելու է.

1. Բանալ երեք կենդրոնական ուսումնարան, մօտաւորապէս ֆրանսական Լիսէների ծրագրով, Թէհրանում, Թաւրիզում և Նոր-Ջուղայում, վերածելով հետզհետէ և ըստ ներման միջոցների, այդ քաղաքների ազգային վարժարանները կենդրոնական։

2. Բանալ աստիճանաբար մի քանի միջնակարգ չորս-դասարանեան դպրոցներ այլ կենդրոններում։

3. Բանալ ստորին ժողովրդական-ծիսական, մէկ և երկ-դասարանեան դպրոցներ գիւղերում և մանկական պարտէզներ։

ԺԱ.— Կենդրոնական յանձնաժողովը պէտք է հրատարակէ բոլոր դպրոցների համար նպատակայարմար դասագրքեր, կազմված ձեռնհաս անձերից։

ԺԲ — Բոլոր հայ դպրոցների մէջ առանդնվող առարկաների շարքում պարտադիր են Հայոց և Պարսից լեզուները։ Օտար լեզուներից գլխաւորապէս պէտք է աւանդվի ռուսերէնը, իսկ անգլիականը և ֆրանսականը լաւ յարմարութեան։

Բոլոր առարկաները պէտք է աւանդուեն հայերէն լեզուով։

ԺԳ —Դրծի նախաձեռնութեան համար կազմված է Թէհրանում ժամանակաւորապէս Նախաձեռնող Կենդրոնական Ցանձնաժողով։ (Այս յանձնաժողովը կազմուած է 39 անդամներէ՝ որոնց 11ը կը գտնուին Թէհրանի, 3ը Բագուի, 2ը Թիֆլիսի, 3ը Մոսկուայի, 8ը Դաւրէժի, 5ը Նոր Ջուղայի և 2ը Ռաշտի մէջ.—Ծ Խ.)։

ԺԴ.—«Նախաձեռնող» կամ ժամանակաւոր յանձնաժողովն պարտաւոր է.

1.) Կատարել բոլոր նախապատրաստական գործողութիւնները։

2.) Բանակցել ձեռնհաս մամլիների և անձնաւորութիւնների հետ թէ ծրագրուած կրթական միութիւնը ի գլուխ բերելու և թէ ընտրել տալու օրինական, մշտական, կրթական կենդրոնական յանձնաժողով, որի կեդրոնատեղին կը լինի Թէհրանը։

3.) Կատարել ներկայ ծրագրի իրագործման վերաբերեալ բոլոր գործողութիւնները մինչեւ մշտական յանձնաժողովի ընտրութիւնը, որից յետոյ նախաձեռնող յանձնաժողովը լուծուած պէտք է համարուի։

ԺԵ. Մշտական կեդրոնական յանձնաժողովի ընտրութիւնից յետոյ պէտք է խմբագրուի մշտական և մանրամասն կանոնագրութիւն, հին ունենալով ներկայ ծրագրի էական կէտերը։

Թեհրան, 1 յունվար 1900.

ՈՒՐՑԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. Որբանոց. — Կայուածական դաս մը —Կառուցի — Կեղծ հանրագիր մը.— Հունձքերուն տուրք։

ՈՐԴՅԱ, 30 Ապրիլ 1900.

Տնտեսական անյաջող պայմաններու բերմամբ՝ տեղւոյս Ազգ. Որբանոցի Հոգաբարձութիւնն ալ զերծ չէ դրամական պէտքերու մատաղութենէն։ Այս կացութեան մէջ Հոգաբարձութիւնը անցեալ շաբթուն գոհութեամբ ստացած է հինգ անգլիական ոսկի նուէր մը, որ յանուն Որբանոցին ղրկուած է Ամերիկայի մէջ կազմուած որբախնամ Մարմնին Նախագահ Պ. Մ. Ղ.պարեանի կողմէ։

—Իսպէս երբեմն եղած հրատարակութիւններէն ծանօթ է, 1—2 տարի առաջ տեղւոյս Ազգ. կարեւոր կալուածի մը (վաքֆ խանի) դէմ դատ բացուած ըլլալով՝ կը շարունակուէր քաղաքիս Շէրիի դատարանին առջեւ։ Այս դատին շարունակութիւնը դադրեցուցուած է առայժմ նոյն իսկ դատ բացող դատախազին պահանջմամբ։

—Քանի մը շաբաթէ ի վեր վերսկսուած է Ուրֆա-Հալէպ կառուցիի շինութեանց։ Այնուն փոփաքն է օր առաջ ի գլուխ եկած տեսնել այս հանրային ձեռնարկը։

—Կ'իմանանք թէ անցեալները կեդրոնական Ժողովը տեղւոյս Առաջնորդարանին ուշադրութեան յանձնարարած է Ուրֆայի թեմերէն էհնէշ և Ճիպին գիւղերու ազգայնոց մէկ հանրագրին նկատառութիւնը, որով առ ի չգոյէ քահանայի՝ իրենց հոգեւոր մխիթարութենէ զուրկ ըլլալը յայտնելով դարման խնդրած էին։ Որովհետեւ էհնէշ գիւղը անցեալ տարուէ ի վեր ունի իր յատուկ քահանան և Ճիպին՝ հակառակ Առաջնորդարանի յորդորանաց՝ նիւթական նկատումներով չուզեր յատուկ քահանայ պահել և ժամանակէ մը ի վեր կը նախընտրէ մերձաւոր գիւղին՝ Էնէշի քահանայովը զոհանալ, զարմանքով լսուած է նոյն գիւղացոց դիմումը Պատրիարքարան։

Բայց սոյն խնդրին գաղտնիքը երեւան եղած է տեղւոյս Առաջնորդարանի մտադրութեան վրայ, որով պատրաստուած էր նոր քահանաներ հայթայթել նոյն գիւղերուն։ Իսկ այս որոշման՝ էհնէշի և Ճիպինի Թաղ. Խորհուրդները ժողովրդին երեւելիներուն հետ գրաւոր պէս յայտնած են Առաջնորդարանի՝ թէ իրենք երբեք ո՛ և է տեղեկութիւն չունին Պատրիարքարան ղրկուած հանրագրէն՝ ու քահանաներու յաւելումը չընդունելով՝ ազդուապէս կը բողոքեն իրենց անուամբ նենգողներու դէմ ու անոնց երեւան հանուիլը կը պահանջեն։ Այս անպատուաբեր ընթացքը կը վերաբերի անշուշտ անձնական նկատումներէ թելադրուած 3—4 տկարամիտ հակընթացներու, որոնք անցած տարիէն ի վեր՝ պտտորանքներ յերիւրելով՝ ի զուր անիրաւ ու ապարդիւն ջանքեր ըրին Առաջնորդարանին դէմ դժուարութիւններ յարուցանելու։

Կեղծ հանրագրին գալով... ինքնաիպ չէ՞ք գտներ հակառակասէր ոգիներու այս նոր—ու կարմիր— գիւղը։

—Անձրեւաջատ աշունէն ու ձմեռէն ետքը՝ որոշ երկրագործական տեսակէտով սքանչելի տարի մը կը պատրաստէին մեզի, ամուլ գարուն մը ունեցանք։ Մարտի առաջին եօթնեակին մէջ միայն անձրեւները չալուանեցին. անկէ ի վեր բացայայտ չորութիւն է որ կը տիրէ, 1—2 ա՛գամի անշան բացառութեամբ։ Եթէ Հալէպ գեւռին արդէն կտապինդ քընթկած վիճակի մը մէջ են, թէև հերուանէն ադկէ։ Դժբաղդաբար մարմարը սկսած է միւս կողմէն իր նախմիրը գործել. դեռ թռչելու վիճակին եկած չէ, բայց հիմակու

ՀԱՅԿԱԶՅԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՅԹՆԵՐԸ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ ՎԱՂ ՊԱՅԾԱՌ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒՄ ՎԱՍՏԱՂ

ՀԵՂՈՒ ՎԵՐԱՀԱՅԿՈՒ ԳԱՂԹՈՂԱԿԱՆ ԿՈՉՈՒՅԹՆԵՐ

ԹՈՒՔԱՀԱՅԵՐԵՆԵՐԻ

ԴՈՒՐՍՈՒՆ ԹԵՐԵՎԻՆ Ե. Ս.

Սանդրաստան միտքն ավ է զարհուրելի միտքերի մեջտեղ։ Ամենայն ավ էնպես ինչպես ամենայն ինչ։ Ամենայն ինչ ավ է։ Ամենայն ինչ ավ է։ Ամենայն ինչ ավ է

Վերջին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ. — Վեհաբեկ ատեանին անդամ անուանուեցան Կ. Պոլսոյ վերաքննիչ ատեանին Հուգուզի ճիւղին նախագահ Հայտար էֆ. և Բերայի նախնական դատարանին ընդհանուր դատախազ Միխաիլ էֆ.։ Կ Պոլսոյ վերաքննիչ ատեանին Հսկողի ճիւղին նախագահ անուանուեցաւ Կ. Պոլսոյ նախնական դատարանին առաջին նախագահ Ասլի պէյ, որուն յաջորդեց Բերայի նախնական դատարանին առաջին նախագահ Էմին էֆ.։

—Միլիվայութեան ատենեան տրուեցաւ կայս. անձնական Գանձուն նախարարութեան արքունի կալուածներու առաջին ճարտարապետ գնդապետ Արիֆ պէյի։

—Երրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Ֆրանսացի ճարտարապետ Պ. Բիսիէի։

—Իմիրազի ոսկի չքնդրամ՝ զինուորական վարժարանին դասաւանդութեանց տեսուչ գնդապետ Մէհմէտ Էսատ պէյի և բժշկական վարժարանին ներքին տեսուչ գնդապետ Իհսան պէյի։

ՏՈՒԲԱ. ՀԷԲՐՈՒՈՐԹԻ ՆԱՄԱԿԸ.— Իգնատի մէջ կը կարդանք. — «Նիւ Եորք Հերըլտ» ապրիլ 21ի իր թիւին մէջ հրատարակած է տուեալ. Ճորճ Հէբրուորթի երկար մէկ նամակը։ Տաքթորը հինգ տարի առաջ Կ. Պոլիս եկած և Տրապիզոնէն Էրզրումի ու Խարբերդի կողմերը և Անատոլուի մէկ քանի նահանգները շրջելով իսքէնտէրուն ինչած էր։ Այդ ուղեւորութեան նկատմամբ Տաքթորին հրատարակած նամակները լրագրոյս մէջ ալ թարգմանուած էին։ Տ-քթ. Հէբրուորթ այս անգամուան իր նամակին մէկ մասին մէջ վեհ. Սուլթանին բարձր ձիրքերուն վայելուչօրէն կ'ըսէ թէ Ն. Վեհափառութիւնը ամենամեծ կարողութիւն մը ունի քաղաքական գործերը վարելու համար և թէ եւրոպայի նշանաւոր քաղաքագէտներէն և ոչ մէկը Վեհ. Սուլթանին չափ բարձր գաղափարի տէր է։»

ՃԱՒՈՒՆԻ Ֆ.թօ Հիթօ իշխանը այսօր մայրաքաղաքս կը սպասուի։ Իշխանին հիւրասիրելու համար կարգուած է կայս. թիկնապահ դեր գնդապետ Բիլա պէյ։

ԱՆԳԼԻՈՅ Վիքթոր իա թագուհիին ծննդեան 81 րդ տարեդարձին առթիւ, երէկ, Օսմ. պահպանութիւնը, դեսպանատան պահպանաւորները և բոլոր անգլիական նաւերը դրօշներով զարդարուած էին։ Կէս օրին օսմ. պահպանութիւնը քընդանօթ արձակեց։ Պոլսոյ, Զալաթիոյ ու Բերայի անգլիական բոլոր վաճառատունները և շէնքերը դրօշներով զարդարուած էին։

Զինուորական Ֆինլէյ Ցանձնաժողովն անդամներէն միւիր Ֆազլը փաշա, արտաքոյպատ Իպրահիմ պէյ, կայս. առաջին թիկնապահ Մէհմէտ փաշա և կայս. թիկնապահ Ահմէտ Ասլի փաշա, երէկ կէս օրին. անգլիական դեսպանատունը երթալով Վեհ. Սուլթանին կողմէ շնորհաւորական այցելութիւն տուին դեսպան Սըր Նիքոլաս Օ'Բրնորի։ Մեծ-Եպարքոսին ու արտաքին գործոց նախարարին թարգմաններն ալ նոյն նպատակով այցելութիւն տուին անգլիական դեսպանին։

Անգլիոյ դեսպանատան մէջ երէկ շնորհաւորական չքեղ ընդունելութիւններ կատարուեցան։ Ներկայ էին օսմ. բարձրաստիճան պաշտօնատարներ, դեսպանները և անգլ. գաղթականութեան երեւելիները։ Թէրսանէի Ռ.ագածուներու խումբը մինչեւ իրիկուն նուագեց։ Դեսպանատան պարտէզին մէջ տրուելիք հանդէսները՝ օդին գէշութեան պատճառով դեսպանատան սրահներուն մէջ կատարուեցան։ Պարահանդէսի յատուկ մեծ սրահին մէջ ձոյս չքաղեղաններ պատրաստուած էին։ Պաշտօնապէս դրկուած պաշտօնատարները միայն համգեստ կը կրէին. իսկ միւսները սեւ հագուստ։ Հրաւիրեալներուն մէջ որոնց թիւը խիստ շատ էր, կը նշմարուէին Մեծ-Եպարքոսը, դատական նախարարը, Պետական Խորհուրդին նախագահը, արտաքին գործոց նախարարը, թնդանօթարանի վերատեսուչ Զէքի փաշա, անուառներու և հանքերու նախարարը, քաղաքային ու դիւանական ուրիշ բարձրաստիճան պաշտօնատարներ, Ցունաց Ս. Պարիարքը, Ունձեան Արիկ էֆ. դեսպանատնոյ առաջին թարգմանները և։

—Վիքթորիա թագուհիին ծննդեան տարեդարձին առթիւ Իզմատ սա տղերը կը գրէ.

«Դեղեցիկ զուգադիպութեամբ մը Անգլիոյ Վեհ. Վիքթորիա թագուհիին ծնունդեան 81 րդ տարեդարձը կը հանդիպի իրարու յաջորդող յաղթութեան օրերու։ Այս տարեդարձին առթիւ թագուհիին մատուցուելիք նուէրներէն և ոչ մէկը այնչափ արժէք ունի որչափ այն զոր Պատէն Բուլէ գնդապետը մատոյց երբեւ արդիւնք Անգլիացիներուն հաստատմութեան և տոկունութեան։ Անգլիոյ Վեհ. թագուհին ծնած է 1819 մայիս 24ին և գահակալած՝ 1838 յունիս 28ին։ Հաւասարօրէն Լորտ Ռ.ոբերթս այդ երկրորդ թուականին՝ այսինքն յունիս 28ին, իբր այցետոմս ուրախութիւն մը դրկէ։ Ամէն ոք ասիկա կը մաղթէ։ Մարդկութեան տեսակէտով ամէն կերպով կը փափաքուի որ կարելի եղածին չափ լաւագոյն պատերազմ մը, որ այլեւս չի կրնար շարունակուիլ։ Արդարեւ շատ կեանքեր զոհուեցան այդ պատերազմին։ Պոէր ազգէ որ այնչափ ատեն Անգլիոյ ոյժին և արժանիքին դիմադրեց, այլեւս չուներ այն տեսակ անձ մը, ուրիկ կարենայ ծառայութիւն մը սպասել։ Պոէրները օգտակար արդիւնք մը պիտի չկրնան ձեռք բերել իրենց այդ անօգուտ և քաջարի ընդդիմութենէն։ Պատիւն զատ ամէն բան կորսուած է։ Բանի որ այս կէտը ծանօթ է և պատիւն ու արժանապատուութիւնը փրկուած, ի՞նչ հարկ կայ պարապ տեղը արիւն թափելու։ Անգլիացիներուն յաջողութեան մասին մեր բրած բարեմաղթութեանց պատճառը մեզի հետ աւելի վերաբերութիւն ունեցող պարագայ մըն է։ Ներկայ պատերազմէն աւելի դարձած տեղերը խիստ գործունեայ շատ մը իսլամ ժողովուրդներ կան. առանց հիշելու թիւը թէեւ յայտնի չէ, սակայն անշուշտ տեղական տարբերուն ամէնէն կարեւորը կը կազմեն բարոյական ու մտաւորական տեսակէտով։ Պոէր վարչութիւնը իսլամ ժողովուրդին հետ մեղմութեամբ չվարուելէն զատ շատ մը հարստահարութիւններու ալ կ'ենթարկէ. աշխարհի բոլոր լրագիրները կը հաստատեն այդ պարագան. մինչդեռ հայաւսային Ափրիկէի մէջ Անգլիացիներուն վարչութիւնը, ընդհակառակը այդ տեղի իսլամներուն աշխատելուն և գործելուն թոյլատու եղած է։ Տեղացիները Անգլիացիներէն չեն տեսած այն դժուարութիւնները ու արգելքները որոնց ենթակայ կ'ըլլան Պոէրներուն կողմէ։ Անգլիոյ պատմութիւնը չէ տեսած այս տեսակ դար մը որուն բոլոր պատերազմները այսչափ նպաստաւոր արդիւնքներով և ընդարձակ շահեր ձեռք բերելով աւարտին։ Զէր ենթադրուեր որ Անգլիա դարուս վերջը այսչափ գործունէութիւն և եռանդ ցոյց տայ։ Ո՛չ Ամերիկայի իր գաղթավայրերը պաշտպանելու և ոչ ալ դարուս ամէնէն մեծ հրամանատարին յաղթելու համար հիմնուած պէս ընթացք մը չէ ունեցած։ Զէ եղած ժամանակ մը որ քաղաքականութեան այսչափ ծառայութիւն մատուցած ըլլայ։ Ինչպէս փոքր երկու ազգերը ուղղութեան բերելու համար բրած զոհողութիւնները ամէնէն սոսկալի միութիւններու դէմ չէր բրած։ Արդեօք Պոէրներրը ամէնէն աւելի գովելու է որոնք այդչափ ահռելի ոյժի մը երեւան գալուն պատճառ եղան, թէ Անգլիացիները՝ որո՛ք կարող են ի հարկին այսչափ զօրութիւն ցոյց տալ։ Մեր գնահատութիւնը բնաւ չենք կրնար երկու կողմին միջեւ բաժնել, վասն զի աչքէ չեն կրնար երբեք վրիպեցնել Պ. Զէմպրլէնի այն խօսքը թէ ներկայ պատերազմին մէջ Անգլիա կը նմանի աղ թեւը ետին կապած ըմբիշի մը։ Այդ աղ թեւը նաւատորմն է։ Այդ պատճառով է որ Անգլիա մեծ դժուարութիւններու հանդիպեցաւ հարաւային Ափրիկէի մէջ։ Հեմա ալ գործին դժուար մասը գնաց և դիւրինը մնաց։ Այդ պատճառով կը մաղթենք որ Թրանսվալի այս պատերազմը ժի՛ դարուն ամէնէն վերջինը եղած ըլլայ։»

ՑՈՒՆՑԱՑ Ս. Պարիարքը, Լողոթէթ պէյի հետ, երէկ, կայս. Պալատ գնաց։

ՀԻՃԱԶԻ երկաթուղիին թրավէրսներուն մէկ մասը Այտընի նահանգին Մէնթէշէ գաւառին անտառներէն կտրուելով պիտի պատրաստուին և ուղղակի Հիճազ պիտի ղրկուին։ Այդ գործին հսկելու համար անտառներու և հանքերու նախարարութենէն պաշտօնեայ մը ղրկուած է Մէնթէշէ։ կայս. կառավարութիւնը որոշած ըլլալով այդ երկաթուղիին բոլոր պէտքերը ներքին արտադրութիւններէ հոգացուին, գիծերու յատուկ երկաթներու մէկ մասը Մէնթէշէի մէջ գտնուած հանքերէն պիտի հանուին։ Մովային նախարարութենէն սպայ մը պիտի ղրկուի հոն, երկաթները հանքերէն հանելու և ձուլելու գործին հսկելու համար։

ԱՓՐԻԿԵԱՆ ՏՐԻՊՈԼՍՈՅ նախորդ կուսակալ Հաշիմ պէյ՝ իր որդւոյն Մո խթար պէյի հետ՝ առջի օր մայրաքաղաքս ժամանեց և ուղղակի կայս. Պալատ գ՝աց։

ԺԱՆՏԱՒՍ. — Աղեքսանդրիայէն կը գրեն մայիս 15 թուականով.—Առողջապահական վարչութիւնը ապահովման մեծաքանակ գործիքներ և դեղեր ղրկեց Մաթարէէ, Տամիէթ ու Մէնզալէ, թէեւ միջոցապահական քննութեամբ հաստատուած է թէ Տամիէթի մէջ և շրջակաները տեսնուած կասկածելի դէպքերը ժանտախտ չեն։ Օսմ. կառավարութեան առողջապահական պատուիրակ Տոքթ. Տուքա որ Սիւէզ գացած էր, վերադարձող ուխտաւորներուն նաւերը քննելու, Աղեքսանդրիա դարձաւ։

—Բոռ Սայիտի մէջ, առջի օր, ժանտախտ մէկ դէպք պատահեցաւ և Ճիտտէի մէջ ալ մէկ դէպք ու մէկ մահ։

—Ռիօ Եանէյրոյի մէջ քանի մը կասկածելի դէպքեր պատահեր են։

—Սան-Ֆրանչիսկոյի մէջ հակառակ ձեռք առնուած միջոցներու, այտուցաւոր ժանտախտը տակաւին կը շարունակէ։ Զինական թաղին մէջ քանի մը դէպքեր պատահած են։ Բժիշկները ժանտախտի չճանչցողով կը պատուաստեն Զինուորները, բայց ասոնք տուներնուն դուրս չեն ելլեր։ Ոմանք բժիշկները կը պարտաւորուին դուռները կոտրելու։ Զինուորներուն արգիլուած է քաղաք մտնելը։

Կ. ՊՈԼՍՈՅ ռուսական դեսպան Պ. Զինովիէվ ապրիլ 28ին Ներկայացեր է Ալէքսանդրա Ֆէոդորովնա կայսրուհիին։

ՊՈՒԼԿԱՐՆԵՐՈՒՆ Ս. Քրիլլոսի եւ Մէթոտիոսի տօնին առթիւ, երէկ, Ֆէնէրի պուլկարական եկեղեցիին մէջ Ս. Եկզարքոս պատարագ մատոյց։ Ներկայ էին գործակատար Պ. Կէշով և պուլկար երեւելիներ։ Եկեղեցական արարողութիւնները՝ հանդիսականները գաղին Քեազըմխանէ, ուր երկու հարիւր հոգինոց սեղան մը արուեցաւ։

ՌՈՒՍԻՈՅ Նիքոլա Բ. կայսեր գահակալութեան տարեդարձին առթիւ, կիրակի օրը, ռուսական դեսպանատան մատուռին մէջ գոհաբանական աղօթքներ պիտի կարդացուին։ Ներկայ պիտի գտնուին դեսպանատան գործակատար Պ. Զերպաչէվ, դեսպանատան ու հիւպատոսարանի բոլոր պաշտօնեաները և ռուս գաղթականութեան երեւելիները։

ՏՈՒԲԱ. ԲՈՍՈՆԻ. առողջապահական ընդհանուր քննիչը, որ Իզմիր գացած էր, վաղը մայրաքաղաքս կը սպասուի։

ՄԵՏԱՒԲ.—Եւրոպայի գլխաւոր հրապարակներէն առնուած լուրերու նայելով մետաքսի նոր բերքը նախորդ տարիէն լաւ պիտի ըլլայ։

ԵԳԻՊՏՈՍԷՆ ԼՈՒՐԵՐ.— Եգիպտական լրագիրները կ'ըսեն թէ Սուտանի տեղական կառավարութիւնը զինուորական կերպով գրաւել պիտի տայ Ֆահր-էլ-կազալը տարոյս վերջերը, այն եղանակին, երբ զոգենաւերը կրնան գետն ի վեր երթալ առանց դժուարութեան։

—Սուտանէն առնուած վերջին լուրերու նայելով, Սպիտակ Նեղոսի վրայ հեղձուցիչ տաք մը կը տիրէ, ինչ որ գոչակել կու տայ թէ անձրեւներու եղանակը կը սկսի։ Երկրագործները՝ նեղոսի ջուրերուն նուազութենէն մտահոգ, անհամբերութեամբ կը սպասեն անձրեւներուն։

ՔԱՐԱՓՆԵՐՈՒ գնման յանձնաժողովը երէկ ալ գումարուեցաւ։ Երեքշաբթի օրուան նիստին առեւտրական ու հանրօգուտ շինութեանց նախարար Զէհնի փաշա ներկայ գտնուած չըլլալով, յանձնաժողովին անդամները կարծիքի փոխանակութիւն մը մէյն կատարեցին։

ՖԱՆԱՆԱԿԱՆ դեսպան Պ. Բոնսթան, առջի օրը, այցելեց Հ. Ալ.ալի երկրագործական վարժարանը և ընդունեցաւ անտառներու, հանքերու և երկրագործութեան նախարար Սէլիմ փաշայի կողմէ, որ ինչպէս ծանուցինք, նոյ. օրը այդ վարժարանը կը գտնուէր։

ԻԶՄԻՐԷՆ կը գրեն թէ հանրային առողջապահութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ է։ Եուտա Ավաեում կ'ապաքինի և քանի մը օրէն բոլորովին պիտի բժշկուի։ Զայն դարմանողներէն և ոչ մէկը վարակուած է։ Զգուշական միջոցները խստիւ կը գործադրուին։ Անցեալ շաբաթ օր Ջլզոմէնի մաքրանոցին մէջ տասնչորս հոգեներ կը սպասին որոնց չորսը՝ ուխտաւորներուն։

ՄԱՆՍՈՒՍԷԻ այն հոգեներ որ իրի կուններու ժամը 10. 45ին կամուրջէն ճամբայ կ'ելլէ դէպի ի Մոռա, Բալամբշ ու Կզվիները, առջի իրիկունը տեղէն չէր շարժեր, թէեւ ժամանակը շատ անցած էր։ Ուղեւորները համբերութիւնենին հատած, իմացան թէ ածուխ չլլալուն համար հոգեներ կեցած էր։ Վերջապէս ածուխը բերուեցաւ և հոգեներ ժամ 11. 15ին կրցաւ ճամբայ ելլել։

ՍԹԵՆԻ լրագիրները կ'ըսեն թէ Կ. Պոլսոյ հելլենական դպրոցաց Մաւրոկորտաթօ իշխանը Նորէն մտադրութիւն յայտներ է դիւանագիտական ասպարէզն քաշուելու համար։ Կ'ըսուի թէ Մաւրոկորտաթօ իշխանը պաշտօնապէս պիտի հրաժարի՝ թուրքեւհելլէն հիւպատոսական պաշտօնադրութիւնը կ'քաշուելէ ետքը։

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ Ֆէրտինանտ իշխանին համար կ'ըսուի թէ պիտի նշանուի Սեւ Լերան իշխանին փոքր աղջկանը հետ։

—Միւ լրագիրը կ'ըսէ թէ Սոֆիայի մէջ հանրային ապահովութիւնը լաւ վիճակի մէջ չէ և թէ ամէն օր գողութիւններ և մարդասպանութիւններ կը գործուին։

—Հարիւր եօթանասունըվեց պուլկար երկրագործներ Ռումանիա ապաստաներ են։

ԽԱՐԲԵՐԴԻ ամերիկեան վարժարանը ընդարձակուելով պիտի նորոգուի։ Ամերիկեան դեսպանատան դիմումին վրայ, կայս. Իրատէ մը հարկ եղած արտօնութիւնը շնորհած է։

ՏԵՍԱԿՆՈՒԹԻՒՆ.—Պուլկարական գործակատար Պ. Կէշով երէկ Բ. Դուռը երթալով տեսակցեցաւ Մեծ-Եպարքոսին հետ։

ՀԱՄԱՅԻ մէջ (Սուրիա) վերջերս սաստիկ փոթորիկ մը ծագելով 10,000 ոսկիի չափ հասուցեր է։

ԱԽՍԱՉԱԿՈՒԹԻՒՆ.—Ցունաստանէն օսմ. սահմանագիծը անցած աւազակներու խումբ մը Թըրհալայի կողմերը ձերբակալուեր է։ Այդ խումբը սահմանագլուխին վրայ գործած շատ մը ասպատակութիւններէն պատ հրեայ վաճառական մը ալ կողոպտեր է։ Աւազակապետին անունն է Զորքուրա։

ՀՐԴԵՀ.—Երէկ գիշեր ժամ 4ին Պոլսոյ Սուլթան Պայազիտի կողմը, Բարմաք Գարու Թաղին Տիպէլի Մէքթէպ փողոցին մէջ Շերիֆի Ահմէտ. փաշայի ապարանքին վերի յարկէն հրդեհ ծագելով ամբողջ չէնքը այրեցաւ։ Կարասիներուն մեծ մասը կարելի չեղաւ ազատել։

ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒՆ չուկային մէջ, երէկ, ոճիր մը գործուեցաւ քսան փարայի համար ծագած վէճի մը հետեւանքով։ Ոսկերիչ Արմենակ ոսկերիչներու յատուկ գործիքով մը իր արհեստակիցներէն Ապրոն վիրաւորեց սրունքէն՝ եօթը տեղ։ Ոճրագործը ձերբակալուեցաւ. վիրաւորը Ոստիկանութեան Դրան հիւանդանոցը տարուեցաւ։

ԴԱՐԱՔԻՕՅԻ կամուրջին վրայ անցեալ օր յանկարծակի եղած թէքտոս անուն ճարտարապետին մարմինը երէկ դիակընութեան ենթարկուեցաւ՝ մահուան պատճառը հասկցուելու համար։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ.— Առջի գիշերը Ֆէնէրի մէջ կղզանք ծախող Անտոն անուն 40 տարեկան պուլկար մը անձնասպան եղաւ ռէվոլվերով. Վրայէն թուղթ մը գտնուեցաւ, ուր գրուած էր թէ կեանքէն ձանձրացած է։ Անտոն անբուժելի հիւանդութեան մը ենթակայ եղած ըլլալն յուսահատած էր։

ՇԻՐՔԻԹԻ ՇՈՒՆԱՅԻ ՄԸ ԸՆԿՂՄԱՇ.—Երէկ իրիկուն ուշ ատեն ցաւալի արկած մը պատահեցաւ։ Շիրքէթի 42 թիւ շոգենաւը, որ Սկիւտարի գիծին յատկացուած է, երէկ իրիկուն ըստ սովորութեան կամուրջին կապուած էր՝ ի հարկին հրդեհի ատեն ջրհան փոխադրելու համար։ Հելլենական շոգենաւ մը որ կամուրջէն ներս պիտի մտնէր, ինկաւ 42 թիւին վրայ եւ զարնուեցաւ։ Բացուած լայն ճեղքուածքէն Շիրքէթի շոգենաւը ջուր առնելով վայրկենապէս ընկղմեցաւ։ Մէջը գտնուողները կարելի եղաւ ազատել։

SIROP DE RAIFORT

Ցաճախ կարեւորութիւն չեն տար տոզոց սխոյժակի պակասութեան. և սակայն շատ կարեւոր է ատիկա ու խելացի ծնողքները անմիջական դարման մը կը տանին անոր՝ իրենց տղոց խմցնելով Կուիմօ եւ Ռեֆոռի հոտաւոր օշարակը, ամէնէն սքանչելի մաքրիչը՝ զոր երիտասարդութիւնը համբոյրով կը գործածէ։

ԱԶԳԱՅԻՆ

Ինչպէս ծանուցած էինք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Ա. գործակատար Տիգրան էֆ. Տէր-Ներսէսեանի, երէկ ժամը 4ին կայս. Պալատ գնաց։

—Վանայ այցելու հովիւ Տ. Ներսէս եպիսկոպոս Արշակեան վերահաս հիւանդութեան մը պատճառաւ, խնդրեր է Ազգ. Պատրիարքարանէն որ արտօնութիւն տրուի իրեն Կ. Պոլիս դառնալու համար։ Տ. Ներսէս Սրբազան կ'առարկէ թէ երկու երեք անգամ յաջորդաբար ինֆլուէնցայէ վարակուելով բոլորովին նիհարցած և ուժաթափ եղած է, և թէ այդ պատճառաւ անհրաժեշտ պէտք ունի օդափոխութեան։

—Պատրիարքական կարգադրութեամբ, երէկ իրիկուն հրաւիրագիրներ ղրկուեցան Խառն ժողովի կիսական և այլասարհական անդամներուն՝ այսօր ժամը վեցին ի նիստ գումարուելու համար Ղալաթիոյ Խրհրդարանին մէջ։

—Պալըքէսէրի և Պանտրմայի Առաջն. Տեղապահ Տ. Թաքիաւ վարդապետ Պալըքէսէրի առաջն. փոխանորդ Տ. Նշան քահանայի ծաղկեայ փլուն կրելու արտօնութիւն տուեր է։

—Խառն ժողովոյ այսօրուան նիստին պիտի նախագահէ Ս. Պարիարք Հայրը։

—Կը լսենք թէ Ն. Ամենապատուութիւնը վաղը Ազգ. Պատրիարքարան գիշերելով կիրակի առաւ ներկայ պիտի գտնուի Մայր Եկեղեցւոյ ժամերգութեանց։

—Սրբազի առաջնորդը Տ. Պետրոս եպիսկոպոս՝ որ թեմական այցելութեանց ելած էր, ճամբայ ելեր է իր Վահնակի կեդրոնը Սրբազ վերադառնալու համար։

—Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ Պ. Գրիգոր Թումանեանց՝ Ազգ. Հիւանդանոցին տարեկան 200 ռուպլիի գումար մը յատկացնել խոստացած է, նոյն հաստատութիւնը կատարած իր այցելութեան պահուն։

ՆԵԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հաճութեամբ կը ծանուցանենք Ազգ. Օր. Հերիքա Եուսուփեանի Նշանախօսութիւնը Աւետիս էֆ. Շալճեանի հետ։

Օր. Եուսուփեան, քոյր Յովսէփ էֆէնտի Եուսուփեանի, Օ. Թաքէօյի Հոփսիմեանց վարժարանի փայլուն շրջանաւարտուհիներէն, մտքի և սրտի յատկութիւններով օժտուած՝ պատուաբեր տեղ մը կը գրաւէ հայ գեղեցիկ սեռին մէջ, և Շալճեան էֆէնտի՝ որ նմանապէս պատուաւոր ընտանիքէ մը սերած Թարապիայի Թղթատարական կայանին պետը, գործօն և յարգելի անձի մը արժանիքով ծանօթ է։ Մեր շնորհաւորութիւնները կ'ուղղենք երկու կողմի ընտանեաց։

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՍ Գրական և Քաղաքական Շաբաթաթերթի 20րդ թիւը կը հրատարակուի վաղն առտու, հետեւեալ բովանդակութեամբ.

Անուշեան հմայքը. ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆՑ։ — Բանաստեղծութիւններ. Աղուորի մը. ԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Դաշնակը. Մ. Ո։ — Մատենախօսական. ՅՈՎՀ. ԴԱՂԱՆՃԵԱՆ։ — Ընտանեկան տուամներ (Բոլ Պուրժէի վերջին էջերէ). Թարգմ. ԵՒԹԻՄԻ ՕՏԵԱՆ։ — Արուեստանոցէն (Բարի գեան Նօթեր). ԱՐՈՒԵՍՏԱՍԷՐ. — Մեր ուրջանաւորս աղջիկները. ԱՐՄԻՆԷ —«Մասիս»ի Ցուտատեսը.

ՄԱՍԻՍ ձեռքէ կը ծախուի հասը ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ։ Տարեկան բաժանորդագինն է կէս օսմ. ոսկի՝ թէ՛ Կ. Պոլսոյ և թէ՛ գաւառներու համար, կանխիկ։ Արտասահման 12 ֆրանք։ Խմբագրութեան կեդրոնն է Ղալաթիա, Նորատունկեան Խան, թիւ 13։

Հեռագիր

ԱՅՍՕՐՈՒԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՐԵՐ

ԼՈՆՏՈՆ, 24 մայիս. — Այսօր լուր եկաւ թէ պոէր պատուիրակութեան պետ Պ. Ֆիլիբ Ուաշինկթընէն Բրիւկէր նախագահին հեռագրած է թէ Մ. Նահանգներուն չմիջամտելուն հետեւանօք, Թրանսվալի ուրիշ բան չի մնար՝ եթէ ոչ կռիւի եղածին չափ լաւ պայմաններով անձնատուր ըլլալ։

—Կը հաստատուի թէ անգլիական բանակը պիտի հոչակէ՝ պատերազմէն ետ կեցող Պոէրներուն ստացուածոց անբռնաբարելիութիւնը։ Կը կարծուի թէ Պոէրները պիտի ընդունին։

—Եթէ Պոէրները անձնատուր չ'ըլլան, երեք անգլիական զօրախումբեր Լորտ Ռոպէրթսի և Պուլլը ու Պատէն Բուլէ զօրավարներուն հրամանատարութեան տակ՝ Բրէթորիայի վրայ պիտի քալեն։

—Ուօրքն զորավարը Տուկլասի մէջ մեծաքանակ ռազմամթերք ձեռք անցուց։

—Պոթա զորավարը ընդհանուր հրամանատար կարգուեցաւ Նաթալի ազգական զինուորներուն։

ԱՒՍՏՐԻԱ

ՎԻԵՆՆԱ.— Պատգամաւորութիւնները Լեմբերկայի քաղաքագլուխին և դահլիճին իրենց վստահութիւն յայտնեցին։

ՄԻԻՆԻՐ ՊԷՏ

ԲԱՐԻԶ. —Օսմ. դեսպան Մ.ունիր պէյ այս երեկոյ դիւանագիտական երկրորդ սեղան մը տուաւ, որ շատ չքեղ եղաւ։

ՂԱԼԱԹԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Քոնսոլիտէ Սեռի Դ.	Օ. Ո.	25	05 1/2
Ամէնէն բարձր գին	»	25	06 1/2
Ամէնէն վար գին	»	25	04 1/2
Ռուսէլի երկաթ. զոց.	Ֆր.	118	87
Ամէնէն բարձր գին	»	119	25
Ամէնէն վար գին	»	118	87

ԲԱՑՈՒՄ 12 Մայիս

Օսմ. Քոնսոլիտէ Սեռի Դ.	Բ. Կ.	25	05 1/2
Ռուսէլի երկաթուղի	Ֆր.	118	75
Օսմանիէ		—	—
Ռէգի		—	—
Օսմ. Պանքա		—	—
Քէռէտի ժէնէրալ ՕՍՄ.		2	34
Սօս. ՕՍ. Շանմ է Վալէօռ		0	15
Օսմ. Ապան. Ընկ.		4	45
Թրամուէյ բանանթ.		665	—
» ժուիսանս		210	—
» պարտաթ.		479	—
Քարափ Կ. Պոլսոյ		470	—
Թրանսվալ		10	75

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Լոնտոն 3 ամիս	Դրշ.	108	35
» » » չէք	»	109	05
Բարիզ » »	Ֆր.	23	11 1/8
» » » չէք	»	22	93 3/4
Գերլին անտոկոս չէք	Մարք	18	68
ի Վիեննա չէք	Ֆլոր.	22	11

ԴՐԱՄՆԵՐՈՒՄ ԸՆԹԱՑՔԸ

20 ֆրանքնոց	Դրշ.	87	15
Անգլիական ոսկի	»	110	02
Բոլ էմբրիալ	»	90	20
Քրիմիք	»	51	08
Մէճիտիէ արծաթ	»	168	07
Մէճիտիէ	»	97	10
Ռուպլի Ռոթշոլտ	Օ. Ո.	2	60

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆ

ԼՈՆՏՈՆ, 23 Մայիս

Անգլիական Քոնսոլիտէ	101	25
Օսմանեան Ռանթ սեռի Բ.	—	—
Օսմանեան Ռանթ սեռի Դ. բաց.	22	87
Օսմանեան Ռանթ սեռի Դ. զոց.	22	87
Օսմանեան Պանքա	17	87
Ռուսական 1890	—	—
Հելլենական 5 %	41	—
» Մօ օրոլ	45	25
Պուլկարական 1888	84	—
Լէժիսլէն իւնիֆիէ	—	—
Տօմինիալ	101	25
Թրանսվալ	3	25
Այտրն երկաթուղի	10	—
Փոխառուած, են	25	420

ԲԱՐԻԶ, 23 Մայիս

Ֆրանս. Ռանթ 3 %		100	95
» » 3 1/2 %		103	
Օսմ. Քոնս. սեռի Դ.) բաց.	Դրշ.	23	20
) զոց.	»	23	20
» » » Բ.	»	—	—
« « « Դ.	»	26	15
Օսմ. Կայս. Պանքա	Ֆր.	573	—
Օսմանիէ	»	426	—
Ռուսէլի երկաթուղի	»	121	—
Օսմ. մաքսատուն	»	5 5	—
Օսմ. Ռէգի	»	318	—
Ռիոճոնիթ Թիւրք 4 %		481	75
Քէռէտի Լիոնէ		1083	—
Իտալական Ռանթ	»	94	75
Սպանիական արտաքին	»	73	50
Էժիպտէն իւնիֆիէ		—	—
Թրանսվալ	»	81	25
Զէք Լոնտոնի վրայ	»	25	200
Դրամագոց	»	63	50

ՎԻԵՆՆԱ, 23 Մայիս

Քոնսոլ. Լոնտոնի վրայ	»	212	60
Ռուսէլիի երկաթուղի	»	115	50
Օսմ. Ռէգի	»	192	—

ՊՐԻՍԼԷ, 23 Մայիս

Օսմ. Քոնս. սեռի Դ.		23	—
Ռուսէլիի երկաթուղի		118	75

ՊԵՐԼԻՆ, 23 Մայիս

Ռուպլը	»	216	60
Ռուսէլիի երկաթուղի	»	116	90
Անատ. երկաթ. պարտաթուղթ	»	—	—
Քանք. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20	300

ՏՈՔԹ. ՆԻՒՎՎԱՊ ԱԼԻ

ՀՆԴԿԱՍՏԱՆՑԻ ԱԿՆԱԲՈՅԺ

Հնդկաստանցի նշանաւոր ակնաբոյժ Նիւվվապ Ալի էֆ., որ երկար ատենէ ի վեր ակնաբուժութեան արհեստը կատարեալ ճարտարութեամբ ի գործ դրած է օտար երկիրներու և մանաւանդ կայսերական նահանգներու մէջ, և ամէն տեսակ հինցած և նոր աչքի հիւանդութիւնները դարմանած է կատարեալ յաջողութեամբ, այս անգամ Հնդկաստանէն վերադարձած ըլլալով Բերա, Թէքէք Ճատտէսի 63ը թիւ տանը մէջ հաստատուած է։ Ամէն առտու ժամը երկուքէն մինչեւ ինը հիւանդներ կ'ընդունի, նմանապէս Չորեքշաբթի և Շաբաթ օրերը երկուքէն մինչեւ ինը ձրիաբար կը դարմանէ իրեն դիմող հիւանդները։ 580 19—30

ԽԻՍՏ ԳԵՂԵՑԻԿ

և ընտիր ապրանքներ ծախու հանուած են Նոր Օ ԲՐԻՆԹԱՆ վաճառատան մէջ, Բերա, Պօն Մարշէին դիմաց. պէտք է գիտնալ որ այս ապրանքները անհատապէս կերպով ածան են, որովհետեւ վաճառատունէն ուղղակի կը հանին և պզտիկ շահով մը կը ծախուին։ Հասարակութիւնը ուրեմն խիստ շահաւոր պայմաններով և չափաւոր գիներով պիտի կրնայ գնել եղանակին համար իրեն պէտք եղածը, ինչպէս քրտամաթ և պլուզի համար մետաքսէ կերպասներ լաւ տեսակէ և նոր դծագրութեամբ, մէթրօն 10, 12 և 14 ղրուշ. թափթա կասէ ելաչխատութիւն իր դիմացկունութեան համար ամէն նոր գոյներով մէթրօն 12 և 14 ղրուշ, ֆանթէզի մետաքսէ կերպասներ ամբողջ ք

ՊՎԿՍՊ

ԳՆԹԳՆՑՆ—ՈՒՆԵՎՍ ԺՈՏՍԻԹ

ԳՈՆՆՏ ՎԳՈՅԺԱՄԿ

9

ՀԱՄԼԵՏ

Հասնում է մեր ձեռքը հետևյալ նամակը.

«Ամերիկայի Օմահա քաղաքից, Նեբրասկա նահանգ, 1900 թվականի Հոկտեմբերի 16-ին։

Ամենայնիվ, ինչպես ասացի, ինձ ամենուրեք ուրախությամբ ընդունեցին։ Ինձ հանդիպեցին մի քանի հայեր, որոնք ինձ հետ ուրախանալով հարցրեցին, թե ինչպես է գտնվում Հայրենիքը։ Ինչպես գիտեք, ես ոչ մի լուր չունեի հայրենիքից